ՔԱՂՎԱԾՔ

«Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի առցանց նիստի արձանագրությունից

(Կազմված է «25» հունիս 2019 թ.-ին և բաղկացած է 2 (երկու) թերթից)

ք. Երևան 25.06.2019 թվական

2019 թվականի հունիսի 24-ին տեղի ունեցավ «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) առցանց նիստը, որը համակարգում էր խորհրդի նախագահ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը:

Առցանց նիստին ներկա էին Խորհրդի 17 (տասնյոթ) անդամներից 12-ը (տասներկուսը):

Խորհրդի քվորումն ապահովված է:

1.	Արայիկ Հարությունյան	- ՀՀ կրթության և գիտության նախարար
2.	Վաչե Տերտերյան	-ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ
3.	Մուշեղ Մանասյան	-ՀՀ գյուղատնտեսության նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
4.	Լիանա Ղալթաղչյան	-ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
5.	Սեդրակ Սիմոնյան	-ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետի տեղակալ
6.	Արմեն Գևորգյան	-ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական
7.	Ռոբերտ Ստեփանյան	-ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ
8.	Հովսեփ Հովհաննիսյան	-ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի բաժնի պետ
9.	Դմիտրի Մարիյասին	-ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցչի տեղակալ
10.	Ելենա Միլոշևիչ	-ՄԱԿ-ի պարենի համաշխարհային կազմակերպության հայաստանյան գրասենյակի տնօրեն
11.	Գայանե Նասոյան	-ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության հայաստանյան կազմակերպության ներկայացուցչի օգնական

12. Լուսինե Անտոնյան -«Հայաստանի մանուկներ» հիմնադրամի առողջապահական ենթածրագրի ղեկավար ժամանակավոր պաշտոնակատար:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. «Կայուն դպրոցական սնունդ» Հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնում Սաթենիկ Մկրտչյանի նշանակման հարցը:
2. «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի կազմում 2019թ. հուլիսի 1-ից «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման կենտրոն (ՄԿՈՒԶԱԿ)» հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին հարցը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման կենտրոն (ՄԿՈՒԶԱԿ)» հիմնարկը 2019թ. հուլիսի 1-ից լուծարվելու է:
3. Սաթենիկ Մկրտչյանին «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար նշանակելուց հետո հանձնարարել Սաթենիկ Մկրտչյանին և նախկին տնօրեն Բագրատ Եսայանին մինչև 2019թ. հուլիսի 10-ը՝ սահմանված կարգով, կատարել ընդունում-հանձնում:

Խորհրդի առցանց նիստին մասնակցած անդամների 12 կողմ ձայնով խորհուրդը որոշեց.

ա/ Սաթենիկ Սոկրատի Մկրտչյանին /անձնագիր BA2052763 տրված 20.10.2015թ. (երկու հազար տասնհինգ թվականի հոկտեմբերի քսանին), կոդ 010, հաշվառված՝ ք. Երևան, Տ. Պետրոսյան 36 (երեսունվեց) շենքի թիվ 52 (հիսուներկու) հասցեում, ՀԾՀ՝006947477, էլ. փոստ՝ satenik.mkrtchian@gmail.com/ նշանակել «Կայուն դպրոցական սնունդ» Հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնում,

բ/ Ստեղծել «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի կազմում 2019թ. հուլիսի 1-ից «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման կենտրոն(ՄԿՈՒԶԱԿ)» հիմնարկ, հաստատել կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը:

գ/ հանձնարարել Սաթենիկ Մկրտչյանին և նախկին տնօրեն Բագրատ Եսայանին մինչև 2019թ. հուլիսի 10-ը՝ սահմանված կարգով, կատարել ընդունում-հանձնում:

Սույն քաղվածքը համապատասխանում է բնօրինակին, որում առկա է Խորհրդի առցանց նիստին ներկա 12 անդամների ստորագրությունները:

Սաթենիկ Մկրտչյան՝

«Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի
գործադիր տնօրեն